## ԱՆԹԻԼԻԱՍԻ ՎԵՐՋԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ

*Սփյուռքից ստացված բազմաթիվ պաշտոնական հեռագրեր խոսում են այն մասին, որ Կիլիկյան Աթոռի Միաբանական ընդհանուր ժողովը գումարվելով հուլիսի 23-ին, օրինավոր մեծամասնությամբ, Կաթողիկոսական նոր տեղապահ է ընտրել ամենապատիվ Տ. Խադ արքեպիսկոպոս Աճապահյանին։ Այս առթիվ Կիլիկյան Աթոռի Միաբանական ընդհանուր ժողովի նախագահ գերաշնորհ Տ. Փառեն եպիսկոպոս Մելքոնյանից հուլիսի 26-ին ստացվեց հեռագիր։*

### ԿԻԼԻԿՅԱՆ ԱԹՈՌԻ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՓԱՌԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Կիլիկիո Կաթողիկոսության Միաբանական ընդհանուր ժողովը պաշտոնանկ արեց Տեղապահ Խորեն Բարոյանին, ամբողջ իշխանությունը փոխանցելով Խադ արքեպիսկոպոս Աճապահյանին։

**Ընդհանուր ժողովի Նախագահ՝**
ՓԱՌԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԵԼՔՈՆՅԱՆ

26 հուլիսի 1956 թ
Անթիլիաս

*Հուլիսի 27-ին Կիլիկյան Աթոռի միաբանության անունից ստացվեց մի այլ հեռագիր Անթիլիասում տեղի ունեցող իրադարձությունների առնչությամբ։*

### ԿԻԼԻԿԻԱՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Զարեհ և Խորեն եպիսկոպոսները չարաշահում են իրենց պաշտոնները։ Նրանք Կաթողիկոսարանի դահլիճում ծեծել տվին վարդապետներին իրենց համախոհների միջոցով։ Ամբաստանում ենք Զարեհ և Խորեն եպիսկոպոսներին զեղծման և ոճրամիտ դիտավորությունների մեջ։ Խնդրում ենք նրանց դատել Հայ Եկեղեցու Կաթողիկոսի, պատրիարքների և եպիսկոպոսների ժողովի առաջ։

ԿԻԼԻԿԻԱՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

27 հուլիսի 1956 թ.
Անթիլիաս

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

ԱՆԹԻԼԻԱՍ

Գոհունակությամբ տեղեկացանք Ձեր ընտրության մասին՝ որպես Տեղապահ Տանն Կիլիկիո Աթոռի: Գնահատելով միաբանության մեծամասնության այս իմաստուն որոշումը, կմաղթենք Ձեզ ուժ և կարողություն, որպեսզի կարենաք ստեղծել խաղաղություն Աթոռից և ժողովրդից մեջ՝ Հայ եկեղեցվո սիրո և միության ոգիով:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

6 օգոստոս 1956
Էջմիածին

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

ԲԻՔՖԱՅԱ

Մեր խոր վշտակցությունը կհայտնենք Անթիլիասի մեջ պատահած դեպքերուն համար, որոնք ժխտումն իսկ են հոգևոր կյանքի և անպատվաբեր մեր ազգի համար: Դուք, Սրբազան եղբայր, կոչված եք պատմական դեր կատարելու և ապահովելու Ձեր Ս. Աթոռին գոյությունն ու հեղինակությունը Ձեր իմաստությամբ, համբերությամբ և վճռականությամբ, զի Աստված ընդ Ձեզ է, և Մենք աղոթող Ձեր գործի հաջողության համար: Մայր Աթոռը և մեր ամբողջ եկեղեցին ու ժողովուրդը Ձեր կողքին են ի սեր մեր սուրբ հավատքի և Ազգի:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

7 օգոստոս 1956
Էջմիածին